«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «««ՀԱԷԿ» ՓԲԸ 6 ԿՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03/26

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/20»

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳԲԲ) 03/26 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«15» 04. 2020թ.
«____» _____ 20 թ

ք.Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ, ի դեմս գլխավոր տնօրեն Մովսես Վարդանյանի, որը գործում է «ՀԱԷԿ» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

«Էներգոնորոգգարանտ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գագիկ Թորոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«««ՀԱԷԿ» ՓԲԸ 6 ԿՎ էլեկտրական շարժիչների նորոգման»** ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **7 աշխատանքային օրվա ընթացքում** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **19446000 (տասնինը միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ**, ներառյալ **ԱԱՀ-ն՝ 3241000 ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3) Պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում (այդ թվում ծառայության վաղաժամկետ մատուցման դեպքում):

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	**«Էներգոնորոգգարանտ» ՓԲԸ**
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,	ք. Երևան, Բաբաջանյան 15 բն 53,
Հ/Հ 1930000199200100	Հ/Հ 15700 02283510100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,	Ամերիաբանկ ք.Երևան
ՀՎՀՀ 04401874,	ՀՎՀՀ 01821313,
Հեռ./ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,	**Հեռ.՝** 374-91-217178, 374-91-217179
Հեռ.՝ 20-04-91, 33-40	**E-mail**: ergtender@bk.ru
E-mail: anpp@anpp.am	

Մ. Վարդանյան

Գ. Թորոսյան

Հավելված N 1
« 15 » 04. 2020թ. կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/20» ծածկագրով
N 03/26 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50531210	1. 6 կՎ էլեկտրական շարժիչի ընթացիկ նորոգում (2 ՊԷՀ - 2,3,4) – 3 հատ 2. 6 կՎ էլեկտրական շարժիչի հիմնական նորոգում (2 ՊԷՀ-1, 5) - 2 հատ 3. 6 կՎ էլեկտրական շարժիչի հիմնական նորոգում (ՍԷՀ 3Ա, 4Ա) - 2 հատ 4. 6 կՎ էլեկտրական շարժիչի ընթացիկ նորոգում (ԱՀ-3,4,6,8) – 4 հատ 5. 2 ՊԷՀ էլեկտրական շարժիչի օդահովացուցիչի նորոգում – 20 հատ 5.1 Տակդիրի պատրաստում համաձայն գծ. № 47.110.00.00. ՍԲ և գծ. № 47.111.00.00. ՍԲ (գծագրերը կցվում են) - 10 հատ * Ծառայությունը մատուցել համաձայն **կից ծավալաթերթերի**:	դրամ	19446000	ըստ ծավալաթերթերի	ՀՀ ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ	Պայմանագիրը ուժի մեջ է մտնելու կողմերի ստորագրման պահից և գործելու է մինչև. 30.07.2020 թ

1. Ծառայություն մատուցողը պարտավոր է պայմանագրի կնքումից անմիջապես հետո Պատվիրատուի ղեկավարությանը ներկայացնի համապատասխան փաստաթղթեր՝ մուտքի թույլտվություն ստանալու համար: Պատվիրատուի կողմից թույլտվությունը տրամադրվում է, միչև 40 օրացույցային օրվա ընթացքում, լիազոր մարմնի (ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԱԾ) կողմից տրամադրված հուսալիության դրական եզրակացության հիման վրա՝ համաձայն ՀՀ կառավարության №744 առ. 09.06.2005 որոշման
2. Ծառայության մատուցման ավարտին տրամադրվում է մեկ տարվա երաշխիքային սպասարկում:
3. Ծառայության մատուցման ավարտին պետք է ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում գործող (Акт о ремонте оборудования выполненного сторонними организациями, Бланк исполнительных документов ТОиР по Акту о ремонте (УД. АТД.09.ОПР.001 ут. 10.02.15г. пр. №534 от 23.08.13г.) ձևաթղթերը կցվում են) փաստաթղթերը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Մ. Վարդանյան
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Էներգոնորոգգարանտ» ՓԲԸ

Գ. Թորոսյան
Կ.Տ

Հավելված N 2
« 15 » 04. 2020թ. կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-22/20» ծածկագրով
N 03/26 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531210	«ՀԱԷԿ» ՓԲԸ 6 կՎ էլեկտրական շարժիչների նորոգում					6000000	13000000	19446000	19446000	19446000	19446000	19446000	19446000	19446000

** Վճարումը կկատարվի ամբողջական ծավալով կատարված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, Կատարողի կողմից հաստատվելուց հետո (այդ թվում վաղաժամկետ կատարված աշխատանքների դեպքում) մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Մ. Վարդանյան
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Էներգոնորոգգարանտ» ՓԲԸ

Գ. Թորոսյան
Կ.Տ

№1

Հաստատում եմ
«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր ճարտարագետ

_____________ Ա. Ռ. Գրիգորյան
«17» 02 2020թ.

Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ

<<ՀԱԷԿ>> ՓԲԸ 6 կՎ էլեկտրական շարժիչների նորոգման աշխատանքների

	Աշխատանքի անվանումը	Չափի միավ.	Քա-նակը	Ծանոթություն
	Ընթացիկ նորոգում՝ էլեկտրաշարժիչ 2ПЭН-2;3;4 տեսակը՝ 2АЗМ-2500/6000 У4, N=2500 կՎտ, n=3000 պտույտ/րոպե, օդաջրային հովացումով, առանց ռոտորի դուրս բերման:	հատ	3	
	էլեկտրաշարժիչի օդահովացուցիչի նորոգում, 6 հատ տակդիրի պատրաստումով:	հատ	12	
	Բեռների բարձրացում մինչև 15 մ:	տ	2.4	
	Բեռների իջեցում 15 մ բարձրությունից:	տ	2.4	
	Հիմնական նորոգում՝ էլեկտրաշարժիչ 2ПЭН-1;5 տեսակը 2АЗМ-2500/6000 У4, N=2500 կՎտ, n=3000 պտույտ/րոպե, օդաջրային հովացումով, ռոտորի դուրս բերումով:	հատ	2	
	էլեկտրաշարժիչի օդահովացուցիչի նորոգում, 4 հատ տակդիրի պատրաստումով:	հատ	8	
2	Բեռների բարձրացում մինչև 15 մ:	տ	21.8	
3	Բեռների իջեցում 15 մ բարձրությունից:	տ	21.8	
	Հիմնական նորոգում՝ էլեկտրաշարժիչ 2СлН-3А,4А տեսակը АВ-113-4М, N=250 կՎտ, n=1500 պտույտ/րոպե, ուղղաձիգ կատարմամբ, ռոտորի դուրս բերումով:	հատ	2	
	Բեռների բարձրացում մինչև 15 մ:	տ	3.4	
2	Բեռների իջեցում 15 մ բարձրությունից:	տ	3.4	
	Ընթացիկ նորոգում՝ էլեկտրաշարժիչ ЦН-3,4,6,8, տեսակը՝ ВАЗ-215/89-20У-4, N=2500 կՎտ, n=300 պտույտ/րոպե, օդաջրային հովացումով, ներկառուցված սահքի առանցքակալներով, ուղղաձիգ կատարմամբ:	հատ	4	
	էլեկտրաշարժիչի օդահովացուցիչի նորոգում:	հատ	16	
2	Առանցքակալի ներդրակի նորոգում: (Վերալցմամբ և մեխանիկական մշակմամբ)	լրակազմ	8	
	Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ պահեստամասերը և նյութերը տրամադրվում են <<ՀԱԷԿ>> ՓԲԸ կողմից:			

Գլխ. ճարտարագետի տեղակալ վերանորոգումների գծով — Մ.Ս. Կարապետյան

ՎՆԿԲ պետ — Օ.Գ. Գևորկյան

ԷԱ պետ — Կ.Կ. Կարապետյան

N2

Հաստատում եմ
«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր ճարտարագետ
_____ Ա.Ռ. Գրիգորյան
«07» 02 2020թ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

«ՀԱԷԿ» ՓԲԸ 2АЗМ 2500/6000 У4 տեսակի 2ՊԷՀ-1÷5 էլեկտրաշարժիչների օդահովացման տակդիրների պատրաստում համաձայն գծ. № 47.110.00.00 СБ և գծ. № 47.111.00.00 СБ

№ հ/հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Ծանոթություն
1	Միջնապատի պատրաստում համաձայն գծ. 47-111.01.01, գծ.47-110.01.04, գծ. 47-110.01.05: б=6 մմ թերթավոր պողպատից, չափսերը՝ 256x71 մմ, 190x72 մմ և 170x72 մմ - 3 հատ:	տ	0.003	Ծավալը հաշվարկված է 1 հատ տակդիր պատրաստելու համար, անհրաժեշտ է պատրաստել 10 հատ տակդիր:
2	Խեմի (обечайка) պատրաստում համաձայն գծ. 47-110.01.01: б=5 մմ թերթավոր պողպատից, չափսը՝ 424x100 մմ - 4 հատ:	տ	0.008	
3	Կցաշուրթի պատրաստում համաձայն գծ. 47-110.01.02: б=8 մմ թերթավոր պողպատից, չափսը՝ 318x318 մմ - 2 հատ:	տ	0.014	
4	Կափարիչի պատրաստում համաձայն գծ.47-110.01.03: б=5 մմ թերթավոր պողպատից, չափսը՝ 195x195 մմ - 2 հատ:	տ	0.004	
5	Կցաշուրթի պատրաստում համաձայն գծ. 47-111.02.00 СБ, б=12 մմ թերթավոր պողպատից և գծ. 47-110.02.00 СБ, б=20 մմ թերթավոր պողպատից - 2 հատ:	տ	0.016	
6	5÷20 մմ հաստության թերթավոր պողպատի կտրում:	մ	12.3	
7	Դետալների եզրերի մաքրամշակում մինչև մետաղական փայլը:	դմ²	11.52	
8	Ø 13 անցքերի գայլիկոնում, թերթավոր պողպատի հաստությունը 8 մմ:	հատ	32.0	
9	Ø 13 անցքերի գայլիկոնում, թերթավոր պողպատի հաստությունը 12 մմ:	հատ	16.0	
10	Ø 13 անցքերի գայլիկոնում, թերթավոր պողպատի հաստությունը 20մմ:	հատ	16.0	
11	Ø 22 անցքերի գայլիկոնում, թերթավոր պողպատի հաստությունը 5 մմ:	հատ	1.0	
12	Ø 40 անցքերի գայլիկոնում, թերթավոր պողպատի հաստությունը 5 մմ:	հատ	2.0	
13	Եռակցման աշխատանքներ:	մ	8.4	
14	Եռակցված կարերի մաքրում մինչև մետաղական փայլը:	դմ²	5.0	
15	Դետալների եզրահատք (եզրերի մշակում) եռակցման համար:	դմ²	3.0	
	Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ նյութերը, որոնք տրամադրվում են Կապալառուի կողմից			Նյութերը հաշվարկված են 10 հատ տակդիր պատրաստելու համար:
1	Թերթավոր պողպատ ГОUS 19903 Ст20, б = 5 մմ	տ	0.12	
2	Թերթավոր պողպատ ГОUS 19903 Ст20, б = 6 մմ	տ	0.03	
3	Թերթավոր պողպատ ГОUS 19903 Ст20, б = 8 մմ	տ	0.14	
4	Թերթավոր պողպատ ГОUS 19903 Ст3, б = 12 մմ	տ	0.08	
5	Թերթավոր պողպատ ГОUS 19903 Ст3, б = 20 մմ	տ	0.16	
6	Էլեկտրոդ УОНИ 13/45 б=4մմ	կգ	2.5	

ԳՃՏ վերանորոգման գծով Մ.Ս. Կարապետյան

ԷԱ պետ Կ.Կ. Կարապետյան

ՎՆԿԲ պետ Օ.Գ. Գևորկյան